



«Նոր ժամանակի կրթություն»ՀԿ

**ՋԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱԴՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ**

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ**

**Հետազոտության թեման՝ Նոր տեխնոլոգիաների դերն
ու՛ ազդեցությունը սովորողների հոգեբանության վրա
Առարկան՝ Դասվար**

Հետազոտող ուսուցիչ՝ Նարինե Սարոյան

**Ուսումնական հաստատություն՝ Ալավերդու թիվ 12
հիմնական դպրոց**

Երևան 2022

Բովանդակաթյուն

Ներածություն	2
Նոր տեխնոլոգիաների դերն ու ազդեցությունը սովորողների հոգեբանության վրա	4
Եզրակացություն	16
Օգտագործված գրականության ցանկ.....	17

Ներածություն

Ժամանակակից տեխնոլոգիական զարգացման դարաշրջանում դժվար է արդեն կյանքը պատկերացնել առանց դրանց: Նորագույն տեխնոլոգիաները դարձել են հաղորդակցման, ինֆորմացիայի ստացման, սոցիալական ստատուսի ցուցանիշ և դրանք ամեն օր իրենց հետքն են թողնում անձի հոգեբանության վրա՝ ազդելով նաև կյանքի որակի վրա:

Աշխատանքային և սոցիալական միջավայրերի, դրանցում գործածվող տեխնոլոգիաների հաճախակի փոփոխությունները մերօրյա մարդուն ստիպում են անընդհատ յուրացնել նոր գիտելիքներ և հմտություններ, պատրաստ լինել նորամուծությունների:

Տեղեկատվական դարաշրջանում կրթության բնույթը նույնպես լուրջ փոփոխության է ենթարկվել և այդ արմատական փոփոխությունը սերտորեն առնչվում է տեղեկատվական և հաղորդակցական արդի միջոցների զարգացման հետ:

Տեխնոլոգիաների զարգացման շնորհիվ ոչ միայն կրթությունը, այլ մեր կյանքի բոլոր ասպեկտներն են ենթարկվել կենսական փոփոխությունների և կախված այն բանից, թե ինչպես ենք մենք և հասարակությունը արձագանքում այդ փոփոխություններին, թե ինչպես են նոր հնարավորություններն օգտագործվում, այս կամ այն նորամուծության ազդեցությունը կարող է շատ վնասակար կամ օգտակար լինել:

Այսպես, թե այնպես, տեխնոլոգիաները մեր կյանքի անբաժանելի մասն են և այլևս հնարավոր չէ առօրյա կյանքից տարանջատել դրանք: Ավելին՝ տեխնոլոգիաները շարունակելու են զարգանալ և ներխուժել կյանքի ամենաանհավանական բնագավառներ :

Սույն հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել տեխնոլոգիաների ազդեցությունը երեխաների հոգեբանության վրա և պարզել, թե ինչ հետևանքներ ակնկալել այդ ազդեցությունից:

Հետազոտական աշխատանքի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ տեխնոլոգիաների կիրառումը երեխաների կյանքում օրեցօր

աճում է՝ միաժամանակ բուռն քննարկումների առարկա դարձնելով դրանց օգտակարության կամ վնասակարության հարցը:

Չնայած վերջին տասնամյակներում գրականության մեջ տեղ գտած բազմաթիվ վերլուծական, հետազոտական աշխատությունների՝ անձի սոցիալականացման և հոգեբանական խնդիրների վերաբերյալ, նորագույն տեխնոլոգիաների ազդեցությունն այդ գործընթացների վրա մինչ ամ լիարժեք ուսումնասիրված չէ և վիճաբանությունների ու մտորումների առարկա է գիտական հանրության համար:

Չամացանցն ու համակարգչային խաղերը դարձել են մեր օրերի ամենակարևոր և միաժամանակ ամենավտանգավոր գործոններից մեկը և ինչքան էլ մարդ փորձի, երբեմն անհնար է դառնում կտրվել դրանցից: Այս հարցում, թերևս, ամենախոցելի խմբերը երեխաներն են: Ինչևէ, անհերքելի է, որ ժամանակը փոխել է ամեն ինչ և իր անդամալի հետքը թողել անգամ երեխաների վրա: Մանկական բակային խաղերին փոխարինելու են եկել հեռուստացույցն ու պլանշետը, համակարգիչն ու հեռախոսը: Փոխվել են երեխաների հետաքրքրությունները և միշտ չէ, որ դեպի դրականը: Այժմ երեխաներին հետաքրքրում են համակարգչային խաղերն ու շփումները սոցիալական կայքերում: Երեխաների մանկությունն անցնում է համակարգիչների և հեռուստացույցների առջև: Երեխաներն իրենց բնույթով հետաքրքրասեր են, դյուրահավատ, հուզական, խոցելի և ունեն արագ ընդօրինակելու հատկություն, իսկ համացանցը լի է անորակ, չճշտված, էրոտիկ բնույթի նկարներով ու տեսանյութերով, որոնք կարող են կլանել անգամ հասուն ու գիտակից մեծահասակներին:

Ջեռուստացույցը լա՞վ է, թե՞ վատ



Այսօր մենք չենք կարող պատկերացնել մեր կյանքն առանց հեռուստատեսության: Դրա շնորհիվ մենք տեղեկացված ենք, դիտում ենք մեր նախընտրած ֆիլմերն ու հեռուստաձրագրերը, սակայն երբ խոսքը վերաբերում է երեխային, հարցը դառնում է ավելի լուրջ ու անհրաժեշտություն է առաջանում ծանրութթև անել բոլոր դրական ու բացասական հետևանքները:

Ջեռուստացույցը վատ է անդրադառնում երեխաների հոգեկան ներաշխարհի վրա: Սա փաստել են Ամերիկյան Օլբանի քաղաքի համալսարանի գիտնականները: Նրանք ԱՄՆ տարբեր քաղաքների 3000-ից ավելի կանանց շրջանում հարցումներ են անցկացրել, որոնց երեխաները 1998-2000թթ. եղել են երեք տարեկան:

Չարցված կանանց երեխաների մեծ մասը ամեն օր հեռուստացույցի առջև նստում էր օրական միջինը՝ 3 ժամ, իսկ հեռուստացույցը առնվազն 5 ժամ միացված էր: Վերլուծելով մի քանի հանգամանքներ՝ գիտնականները եկել են այն եզրակացության, որ ոչ միայն հեռուստացուց նայելն է վնասակար, այլև հեռուստացույցի՝ պարզապես միացած լինելը: Երեխան դրանից նյարդային է դառնում, կռվարար ու ջղային, դադարում է լսել ծնողներին: Միացրած հեռուստացուցի առկայությամբ ծնողներն սկսում են ավելի քիչ խոսել ու շփվել

Երեխաների հետ, ինչի պատճառով երեխայի մտավոր զարգացումը հասպաղում է: Նա ավելի ուշ է սկսում խոսել և ավելի վատ քան իր հասակակիցները:

Ամերիկացի գիտնականների մի խումբ էլ իրականացրեց մի դաժան հետազոտություն, որի նպատակն էր մանկատանն ապրող երեխաներին սովորեցնել խոսել հեռուստացուցի միջոցով: Մեծերը խնամում էին երեխաներին, բայց չէին խոսում նրանց հետ, այդ դերը կատարում էր հեռուստացույցը: Հետազոտության արդյունքում երեխաները չսովորեցին խոսել, ավելին, հուզական կապի բացակայությունը հանգեցրեց նրան, որ երեխաներն ունեցան հոգեբանական և ֆիզիկական զարգացման լուրջ խնդիրներ:

Դիտարկումների արդյունքում պարզվել է, որ հեռուստատեսությունը վատ է ազդում նաև երևակայության վրա, որովհետև երեխան մշտապես պատրաստի սցենարների աշխարհում է՝ իրական խաղալու, բանավիճելու, միջանձնային խնդիրներ լուծելու, վտանգներ կանխատեսելու և ճկուն արձագանքելու փոխարեն: Մշտապես պատրաստի սցենարների աշխարհում երեխան դառնում է պասիվ սպառող՝ մտավոր կարողությունները զարգացնելու և ինքնուրույն գաղափարներ գեներացնելու փոխարեն:

Հոգեբան Անի Բեկյանի կարծիքով համակարգչի ու հեռուստացույցի առջև երկար ժամանակ անցկացնելու արդյունքում երեխաների մոտ ընդհանուր թուլություն և հոգնաճություն, քնի խանգարումներ ու վախեր են դրսևորվում: Տուժում են հոգեբանական գործընթացները. մասնավորապես՝ վատանում է երեխայի հիշողությունը, դասերի ժամանակ դժվար են կենտրոնացնում ուշադրությունը:

Ուսումնասիրությունները բացահայտել են նաև, որ հեռուստացույցի առջև նստած և հիպնոսի վիճակում գտնվող մարդու էլեկտրաուղեղագրերը իրար շատ նման են: Որքան վաղ հասակից է երեխան տարվում հեռուստացույցով, այնքան շատ է տուժում նրա առաջադիմությունը, քանի որ ծանրաբեռնվում է նրա ուշադրությունը, տեսողական և լսողական համակարգերը:

Երեխայի ներդաշնակ զարգացման համար անհրաժեշտ է, որ նա ակտիվ շարժվի, ձեռք բերի նոր հմտություններ, նկարի, կառուցի, իսկ հեռուստացույցի առաջ նստած երեխան պասիվ է և չի զարգանում: Նույն ուսումնասիրության արդյունքում պարզվել է նաև, որ երեխաներն, ովքեր գրեթե չեն նայում հեռուստացույց, մտածում են ավելի ռացիոնալ և նրանց աշխարհընկալումն ավելի իրական է, քան հաճախ հեռուստացույց նայող երեխաներինը: Հեռուստացույցից կախվածությանը

զուգահեռ, երեխայի մոտ նվազում կամ վերանում է կարդալու ցանկությունը: Չետագոտություններն անհերքելիորեն ապացուցում են, որ կարդալու կարողությունը, ցանկությունը և սովորույթը համալիր ունակություններ են, որոնք ապահովում են երեխաների և դեռահասների հոգեկան, սոցիալական և ինտելեկտուալ զարգացումը:

ԱՄՆ-ում 12-15 տարեկանների շրջանում կատարած հետազոտությունները ևս պարզել են, որ դպրոցական առաջադիմության, ինտելեկտի մակարդակի և հեռուստադիտումների միջև գոյություն ունի հակադարձ կապ:

Պարզվել է, որ դեռահասների լեզվական արտահայտածները, մաթեմատիկական ունակությունները, ընթերցանական հմտությունները նվազում են հեռուստադիտումների հաճախության մեծացմանը զուգահեռ: ԱՄՆ-ում երեխաներն օրական միջինում երեքից չորս ժամ հեռուստացույց են դիտում: Դպրոցն ավարտելու պահին նրանք ավելի շատ անցկացրած են լինում հեռուստացույցի առջև, քան դասարանում: Չետուստացույցի առջև անցկացրած ժամանակը կտրում է երեխաներին այլ կարևոր զբաղմունքներից. դրանք են՝ կարդալը, դպրոցական աշխատանքը, խաղալը, ընտանիքի հետ շփվելը և հասարակական հմտություններ ձեռք բերելը: Նրանք հաճախ խճճվում են հեռուստացույցով տեսած երևակայության և իրականության սահմանում: Բռնությունը, սեքսը, ռասսայական և սեռական ստերեոտիպերը, թմրադեղերը և ալկոհոլը հեռուստատեսային ծրագրերի հիմնական թեմաներն են: Շուտ տպավորվող երեխաները կարող են ենթադրել, թե այն, ինչ նրանք տեսնում են, հեռուստատեսությամբ, տարածված է, անվտանգ և ընդունելի: Արդյունքում դա կարող է դրդել երեխային նմանատիպ վարքի և վերաբերմունքի: Երեխաների հոգեկան աշխարհի վրա ազդում են ռեժիսորների կասկածելի նորամուծությունները՝ դաժանությունները, սպանությունները, արյունը, հեռուստա սերիալների քրեական ենթամշակույթ կրող հերոսները, նրանց բառապաշարը: Երեխաների մոտ ձևավորվում է անբնական վերաբերմունք ու հետաքրքրություն այս ամենի հանդեպ:

Ժամանակակից երեխաներն ավելի ու ավելի են նույնանում գեղարվեստական կերպարների և ավելի քիչ՝ իրական մարդկանց հետ: Նրանց երևակայությունն ավելի շատ գրավում է հեռուստատեսային պատմությունների աշխարհը:

Դիտարկումներից պարզվել է , որ ԱՄՆ-ի դպրոցականների շրջանում 1996թ.- ից ավելացել է սպանությունների թիվը, որն աճելու միտում ունի:Դրդապատճառները կարող են տարբեր լինել, բայց հեռուստաէկրանը ամենևին էլ վերջին տեղում չէ:1996թ. ամերիկացի զինվորական հոգեբան Դեյվ Գրոսմենը հասարակությանը զգուշացնում էր, որ եթերով բռնության ցուցադրումը երեխաների մեջ գործի են դնում այնպիսի հոգեբանական մեխանիզմներ, որոնց միջոցով բանակում զինվորներին սովորեցնում են սպանել:Այդ մեթոդներով նրանց մեջ մշակում են դաժանություն ու անտարբերություն: Ինչ վերաբերում է մանկական մուլտֆիլմերին, երեխաների հոգեբանության վրա դրանց ազդեցությունը կախված է բացառապես երեխայի անհատականությունից և բնավորությունից:Սակայն հոգեբանները պնդում են, որ երեխաները հիմնականում ընդօրինակում են բացասական հերոսներին և սկսում են դրսևորել անկառավարելի վարք ու ագրեսիա:

Պարզելու համար , թե ինչպես է ազդում հեռուստացույցը երեխաների վարքի, քնի և դասապատրաստման վրա,զրուցեցի դասվար (1-ին դասարան) Յասմիկ Չատինյանի հետ: Վերջինս հավաստիացրեց, որ այն երեխաները , ովքեր չարաշահում են հեռուստացույց (համակարգիչ) դիտելը, դժվար են հարմարվում դպրոցական միջավայրին, ինքնամփոփ են ու անհաղորդ:Այս կարծիքը կիսում էին հարցված մանկավարժների մեծ մասը, հոգեբան Գոհար Չակոբյանը:

Այս դեպքում հարց է ծագում . հեռուստացույցը լա՞վ է թե վատ, բարեկա՞մ է , թե թշնամի:Ինչպե՞ս են երեխաները հարմարվելու կյանքի իրավիճակներին, ընկալելու իրենց սոցիալական դերը առօրյա կյանքում, ընկերների ու հասարակության հետ իրենց փոխհարաբերությունները, երբ գնալով խճճվում են հեռուստաէկրաններից ստացած ինֆորմացիայի մեջ ու հետզհետե ավելի կորցնում կապը իրականության հետ:

Չամացանց ու համակարգչային խաղեր. անմեղ ժամանց, թե՞ ծուղակ երեխաների համար



Ներկայումս զանգվածային լրատվամիջոցներում , մասնագիտական գրականության մեջ տարածված են «ինտերնետային կախվածություն» , «համակարգչային-խաղային կախվածություն» եզրույթները:Սակայն դրան զուգահեռ կիրառվում են նաև այլ հասկացություններ, օրինակ՝ համացանցի խնդրահարույց օգտագործում, չարաշահում, ինտերնետային վարք, վիրտուալ կախվածություն, ինտերնետային կոմպուլսիվ վարքագիծ և այլն:

Բազմաթիվ են հետազոտությունները, գիտական հրապարակումներն ու գիտաժողովները, որոնցում խոսվում է տեխնոլոգիական , համացանցային կախվածությունների մասին՝ որպես ժամանակակից վարքաբանական և հոգեկան խանգարումների պատճառ:

Ցանկացած նոր տեխնոլոգիա ներդնելիս պահանջվում է փորձարարական մի ժամանակահատված, որպեսզի անհատի և հասարակության վրա դրանց դրական և բացասական ազդեցությունները դառնան չափելի:Որքան արագ են զարգանում ժամանակակից տեխնոլոգիաները, այնքան մեծ է դրանց կիրառման հետևանքով առաջացած բացասական դրսևորումների հավանականությունը:Այդ իսկ

պատճառով առաջանում է երևույթի մանրագնին պատճառահետևանքային ուսումնասիրության անհրաժեշտություն:

Այսօր իրականացվող ուսումնասիրությունները հիմնականում միտված են այն նոր կլինիկական և սոցիալական երևույթների բացահայտմանը, որոնք թույլ են տալիս պատկերացում կազմել հասարակության վիրտուալ վարքի մասին և հասկանալ , թե ինչպես են մարդիկ օգտվում նոր տեխնոլոգիաներից: Տեխնիկական կախվածությունն ազգային հիմնախնդիր է ճանաչվել ոչ միայն ԱՄՆ-ում , այլև Չինաստանում , Հարավային Կորեայում ,Թայվանում, գրեթե ամբողջ աշխարհում:Հիմնախնդիրը ընդգրկվել է նաև հանրային առողջության ոլորտի մարտահրավերների շարքում:

Համացանցային անվտանգությունն այսօր կիբեռաշխարհի մտածողության առաջնային խնդիրն է , մանավանդ , երբ խոսքը գնում է երեխաների պաշտպանության մասին: Նրանք, ինչպես կյանքում, համացանցում նույնպես խոցելի խումբ են համարվում:Ինչպես հեռուստատեսության, այնպես էլ համացանցի բացասական կողմերից մեկն այն է , որ տեղեկատվությունը չի վերահսկվում, չկան տարիքային սահմանափակումներ և արգելքներ:Այս ամենը չի կարող իր ազդեցությունը չթողնել երեխայի մտածողության, վարքի ու հոգեբանության վրա:

Համակարգչային թվացյալ անանունությունը նույնպես հրապուրիչ կողմ է կրոսեր դպրոցականների համար,ինչը նրանց թույլ է տալիս ներգրավվել այնպիսի գործընթացներում , որոնք անհասանելի են իրական կյանքում:Համացանցային հաղորդակցության հատուկ հնարավորությունները առցանց շփվողներին թույլ են տալիս սոցիալական առումով ավելի հաջողակ լինել առցանց ռեժիմում, քան առերես շփման ժամանակ:

Ըստ Բալավինի` համակարգչային կախվածությունը լուրջ խնդիր է , որն ունի հետևյալ նախադրյալներն ու ավտանշանները.

- Երեխան սահմանված ժամանակից ավելի շատ է տրամադրում համակարգչին և համակարգչային խաղերին
- Հրաժարվում է և չի կատարում իր թե՛ տնային, թե՛ դպրոցական պարտականությունները (հավաքել սենյակը, սովորել դասերը, ինքնուրույն կատարել տնային առաջադրանքները և այլն)

- Երեխան համակազմի դիմաց նստելը գերադասում է ցանկացած շփումից, ընտանեկան տոնակատարություններից և հասակակիցների հետ խաղերից.
- Ակտիվ է սոցիալական ցանցերում նույնիսկ ճաշելիս կամ լոգանքի ժամանակ
- Համակարգիչն անջատելիս ՝ ինտերնետն ակտիվացնում է բջջայինի միջոցով
- Ինտերնետային կայքերում անընդհատ ձեռք է բերում նոր ընկերներ
- Համակարգչի բացասական ազդեցությունը նկատվում է ուսումնական առաջադիմության, ուշադրության, կենտրոնացվածության վրա
- Ինտերնետային կապի բացակայության ժամանակ դառնում է ավելի դյուրագրգիռ ու ագրեսիվ, ավելին, նկատվում է անհանգստություն, ուրիշ գործով զբաղվելու ցանկության անկում կամ բացակայություն



Երեխաների՝ համակարգչային կախվածության աճին զուգընթաց բժշկության և հոգեբանության մեջ ի հայտ եկան համապատասխան նոր ախտորոշումներ, ինչպիսիք են աուտիզմի (փախուստ իրականությունից), կախվածություն ինտերնետից և վիրտուալի էպիլեպտիկ սինդրոմը:Տեղի է ունենում երեխայի մտավոր ունակությունների մարում և փոխարենն սկսում են զարգանալ այնպիսի էպիլեպտիկ բացասական գծեր, ինչպիսիք են կասկածամտությունը,

ագրեսիվությունը շրջապատի և ծնողների հանդեպ, իմպուլսիվ գրգռվողականությունը:

Մի շարք ուսումնասիրությունները ցույց են տվել, որ երեխաների շրջանում գիրք ընթերցողների, թանգարան և թատրոն ացելողների թիվը բավականին ցածր է, իսկ տարվածությունը համացանցով ու համակարգչային խաղերով՝ անհամեմատ բարձր:

Ըստ Մոսկովենկոյի՝ համակարգչային-խաղային կախվածությունը երեխայի մոտ կարող է հանգեցնել հոգեկան և ֆիզիկական հապաղումների:Քանի որ կրտսեր դպրոցական տարիքի երեխաները գտնվում են դեռևս ֆիզիոլոգիական ակտիվ աճի շրջանում, նրանց մոտ կարող են առաջանալ մի շարք խանգարումներ, հիվանդություններ՝ մկանային թուլություն, ներքին օրգանների զարգացման արատներ, սկոլիոզ:Համակարգչի ազդեցությունը կարող է շատ բացասական հետևանքներ թողնել երեխայի վրա:

Մեկ այլ ուսումնասիրության մեջ դիտարկվում են համակարգչային կախվածության նախադրյալները, դրանց հետևանքով առաջացած առողջական և հոգեբանական խնդիրները, ուսման վրա բացասական ազդեցության պատճառները:

Նախադրյալների թվում նշվում են հետևյալ գործոնները.

- Ծնողների ամուսնալուծությունը, ծնողների կամ նրանցից մեկի կորուստը:
- Ծնողների անտարբերությունը, երեխայի դաստիարակության գործում ցուցաբերած անհետևողականությունը կամ ավելորդ խստությունը:
- Սթրեսային իրավիճակները և այլն:

Հետազոտությունները ցույց են տվել, որ այս խնդիրներից շատերը առկա են հայ հասարակության լայն շրջանակներում, դրանց մասին արդեն բարձրաձայնում են և՛ ծնողները, և՛ ուսուցիչները, և՛ մասնագետները:Դրանց հետևանքները կարող են լինել շատ լուրջ ու երկարատև, եթե՝ ոչ մշտական, քանի որ տեխնոլոգիական կախվածությունը, դրա ազդեցությունը երեխայի վրա դեռևս մանրազնին ուսումնասիրված չէ և դեռևս տեխնոլոգիական կամ համացանցային կախվածության դրական և բացասական հետևանքները չափելի չեն:

Այսպիսով՝ հայ իրականության մեջ և՛ հաղորդակցական կախվածությունը(սոցիալական ցանցերից կախվածություն), և՛ խաղային կախվածությունը, ներկայացվում է գրեթե հավասարաչափ ցուցանշներով, միայն

մեկ տարբերությամբ, որ տղաների ներկայացուցչությունն ավելի մեծ է խաղային կախվածության համատեքստում, իսկ աղջիկներն ավելի ընդգրկված են հաղորդակցային կախվածություններում:

Վերջերս համացանցում լայն տարածում են գտել երեխաների կյանքի և առողջության համար վտանգավոր խաղեր, որոնք անկառավարելի տարածում են ստացել ամբողջ աշխարհում և մեծ սպառնալիք են երեխաների՝ հատկապես դեռահասության տարիքում գտնվող երեխաների առողջ զարգացման համար:

Սոցիալական մանկավարժ Արփի Բադոյանն ասում է ,որ համացանցային խաղեր խաղալով՝ երեխաները նմանվում են իրենց վիրտուալ կերպարին՝ դառնալով ագրեսիվ, կոնֆլիկտային, դյուրագրգիռ և նյարդային: Տուժում են ծնողների հետ հարաբերությունները, հատկապես, երբ փորձում են նրանց հեռացնել, կտրել համակարգչից:Արդյունքում երեխաների մոտ ձևավորվում է այն դիրքորոշումը, որ եթե վիրտուալ աշխարհում կարելի է ինչ-որ արարք, ապա դա կարելի է անել նաև իրական կյանքում:Դրանք կարող են մանկական վախերի պատճառ դառնալ: Սովորաբար համակարգչային կախվածությունը արտահայտվում է 9-10 տարեկան տղաների մոտ:Յենց համակարգչային դերային խաղերն են յուրաքանչյուր երեխայի համար հոգեբանական կախվածության մեծ վտանգ ներկայացնում:Մեծ մասամբ վաղ տարիքում խաղային կախվածությունն է տարածված, իսկ համացանցային կախվածությունն արդեն ի հայտ է գալիս դեռահասության տարիքում:

Դիտարկումները վկայում են, որ տևական ժամանակով համացանց օգտագործողներն անպայման ձեռք են բերում խնդիրների մի ամբողջ փունջ:Եթե փորձենք հետևել երեխայի վարքին ,որն ամբողջությամբ ընկղմված է համակարգչի մեջ (կուչ եկած նստած, մատների բուռն շարժումներով, ստեղնաշարի կոճակներին նյարդային, անհանգիստ ու անկանոն սեղմելիս) կնկատենք, որ նա ոչ մեկին չի տեսնում ու չի լսում, մոռանում է ամեն բան, անգամ ուտելու մասին , գերլարված է և անհանգիստ: Այդ վիճակում երեխայի հոգեկանը գտնվում է ուժեղ ճնշման տակ(այս տեսարանը կարելի է տեսնել ամենուր՝ տանը, բակում, դպրոցում): Երեխան Էկրանին գամված, լիովին կտրված է շրջապատից ու սուզված վիրտուալ իրականության մեջ , գտնվում է հիպնոտիկ վիճակում: Նրան կտրել Էկրանից, գրեթե անհնար է: Այս մասին փաստում են ծնողները:



Իրական կյանքը մղվում է հետին պլան :Չարագատերն ու իրական ընկերները դառնում են պակաս կարևոր, քան սոցիալական ցանցերի վիրտուալ ընկերները և նրանց գնահատականները:Չամացանցում երեխան հերոս է , սակայն իրական կյանքում ունի շփման ու առաջադիմության լուրջ խնդիրներ, դառնում է միայնակ ու ինքնամփոփ:Բոլոր բարոյական նորմերն աստիճանաբար կորցնում են իրենց նշանակությունը, և դրանց փոխարինելու են գալիս համացանացային անպատժելիությունը, բոլոր տեսակի ցանկությունների և նպատակասլացության կորուստը:Իրավիճակն էլ ավելի կարող է բարդանալ, եթե երեխան հայտնվի պոռնոգրաֆիկ,աղանդավորական, ազգայնամոլական կայքերի տեղեկատվության ազդեցության տակ:

Մանկավարժ-հոգեբան Անի Ապիտոնյանի պրակտիկայում հանդիպել է մի դեպք, երբ դեռահասի մոտ առաջացել են հալյուցիևոզեն երևույթներ և խմորումներ, որն ի սկզբանե սկսվել էր երկու օր անընդմեջ համակարգչի դիմաց լինելուց հետո:Ընդհանրապես հոգեբանի պրակտիկայում 10 երեխայից 8-ը ունենում է կախվածություն սոցիալական կայքերից, համակարգչային խաղերից:Դեռահասների մեծ մասը մտածում է , որ եթե դուրս գան սոցցանցից, ինչ-որ հետաքրքիր բանից իրենք ետ կման:

«Խաղերը, ինչպես նաև սոցցացերում լայքեր հավաքելը ժամանակավոր ինքնահաստատման համար են: Դեռահասը, ստանալով 50 կամ 100 լայք կամ դրական խոսքեր իր նկարների մեկնաբանություններում, սկսում է մտածել ,որ ինքն ամենալավն է , որ բոլորը սիրում են իրեն:Նույնը խաղերում է, որտեղ ավելի

հեշտ է հասնել հաջողության : Նա մեծահասակի նման կարող է գումար վաստակել, բնակարան, մեքենա գնել, խաղատուն գնալ:Գումար ունենալու դեպքում խաղատուն գնալու մոդելը կարող է նստել երեխայի մտածողության մեջ, որպես աշխարհայացք»,-նշում է հոգեբանը:

Մի շարք երեխաների խմբերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այն երեխաները, ովքեր պարբերաբար են օգտվում համացանցից կամ ավելի են տարված համակարգչային խաղերով,, առանձնանում են ուշադրության ցրվածությամբ և ինտելեկտի ցածր մակարդակով:Առավել վտանգավոր է համարվում այն խաղերի կիրառումը , որտեղ առկա են սպանելու , կրակելու բովանդակություններ:

Այս պարագայում տեղի է ունենում.

- Ասոցիացիա, նույնականացում անմահ հերոսի հետ. նրան սպանում են, բայց նորից կարող է վերակենդանանալ ու խաղալ:Սա հանգեցնում է ինքնապահպանաման բնագոյի թուլացմանը:Երեխան կարող է առանց ռիսկի գնահատման փորձարկել կյանքի համար վտանգավոր ցանկացած գործողություն:
- Երեխան սկսում է մտածել, որ ցանկացած կոնֆլիկտ կարելի է լուծել ուժի մրջոցով: Երեխան դառնում է գերակտիվ, կոնֆլիկտային և նույնիսկ ամենախաղաղ ճանապարհով լուծվող խնդիրները փորձում է լուծել ուժով:
- Ոչ մի գործողության համար չեն կրում պատասխանատվություն: Մտածում են, որ կարող են ծեծել դիմացինին, անգամ սպանել, չէ՞ որ նման գործողության համար պատասխանատվություն չեն կրել համակարգչային խաղերի մեջ:

Ծատ հաճախ համակարգչային խաղերով տարվում են այն երեխաներն ու դեռահասները, որոնք ինչ-որ ձևով չսիրված երեխա են համարում իրենց , մեծանում են դժվար կամ բարդ ընտանեկան ու սոցիալական պայմաններում, չեն ինտեգրվում իրենց հասակակիցների միջավայր , առանձնանում են բնավորության շեշտվածությամբ:Սակայն լինում են նաև դեպքեր, երբ երեխան կախվածություն է ձեռք բերում անհասկանալի պայմաններում , անգամ եթե ծնողները շատ ուշադիր են, վերահսկում են համակարգչի առջև անցկացրած ժամանակն ու հետևում, թե ինչ կայքեր է այցելում երեխան կամ ինչ խաղեր է խաղում:Թեև նման դեպքերը հազվադեպ են ,բայց կան:

ԵՊԲՅ բժշկական հոգեբանության ամբիոնի վարիչ և «Ինթրա» հոգեկան առողջության կենտրոնի գլխավոր հոգեբան Խաչատուր Գասպարյանը նշում է, որ թեև որոշ դրական կողմեր կան համակարգչով խաղալիս կամ օգտագործելիս, սակայն բացասական ազդեցություններն ավելի շատ են: Նա հիշում է մի դեռահաս տղայի, ով 1,5 ամիս հրաժարվում էր գնալ դպրոց, չէր շփվում որևէ մեկի հետ և միայն առիթ էր փնտրում շարունակելու իր համակարգչային խաղերը: Հոգեբանը համոզված է, որ նման վարքը երեխային դարձնում է ապաստանական, նպաստում է տրամադրության անկմանը և այլ հոգեբանական խնդիրների առաջացմանը:

Այսպիսով՝ համակարգչային խաղերը խաթարում են երեխայի աշխարհընկալումը, հանգեցնում ծանր, անդառնալի հետևանքների: Սխալ վարքային մոդելները տեղափոխվում են իրական կյանք, և երեխան դառնում է ոչ սթրեսակայուն: Երբ ինչ-որ բան չի ստացվում, միանգամից հիստերիայի մեջ է ընկնում, դառնում առավել նյարդային:

Եզրակացություն

Վերլուծության արդյունքում պարզեցի, որ հեռուստացույցը, համակարգիչն ու համացանցը անգնահատելի դեր են կատարում մեր կյանքում, սակայն դրանց ազդեցությունը մարդկանց, մասնավորապես՝ երեխաների հոգեբանության վրա միանշանակ չէ: Դրանք մարդկային առօրյա մտած ամենակարևոր ու միաժամանակ, բազում վտանգներ պարունակող երևույթներ են: Տեխնոլոգիական այդ հրաշքերը մեղալի նման երկու երես ունեն. մի կողմից տեղեկատվական, հաղորդակացական և ուսուցողական նյութերի անգնահատելի հնարավորություն են, մյուս կողմից՝ աներևույթ մի ծուղակ, որից շատ քչերն են անհետևանք դուրս գալիս:

Ուրեմն ի՞նչ անել՝ պաշտպանվել՝ տեխնոլոգիական նորարարություններից, արգելել՝ երեխաներին օգտվել դրանցից, զրկել՝ նրանց ժամանակակից այս հրաշքներից: Խնդիրը բարդ է, բայց ոչ անլուծելի: Նորագույն տեխնոլոգիաները կարող են և՛ օգտակար և՛ վնասակար լինել այնքան, որքան կենցաղային ցանկացած այլ իր: Մարդկանց խնդիրը պետք է լինի որքան հնարավոր է շատ օգուտներ քաղել դրանցից՝ նվազագույնի հասցնելով վնասները: Պարզապես պետք է ամեն ինչում իմանալ չափը, ինչպես նաև անվտանգ ու արդյունավետ օգտագործելու կանոնները, կրթել երեխաների՝ տեխնոլոգիաներից օգտվելու մշակույթը:

Հետազոտական աշխատանքի շրջանակներում պարզ դարձավ, որ երեխաների ու դեռահասների ճնշող մեծամասնությունը տեխնոլոգիաներն օգտագործում են որպես ժամանցի միջոց կամ խաղալիք՝ անտեսելով դրանց ընձեռած անսահմանափակ դրական հնարավորությունները և ձեռք են բերում հոգեբանական ու ֆիզիկական առողջության հետ կապված լուրջ խնդիրներ:

Վերը նշված խնդիրները պահանջում են բոլորի ուշադրությունը՝ հոգեբանների, բժիշկների, սոցիոլոգների ու հատկապես՝ մանկավարժների:

Ժամանակակից տեխնոլոգիաների ճնշման տակ կատարվող մանկական հոգեբանության փոփոխությունները առաջիկայում կարող են հանգեցնել անդամնալի հետևանքների թե՛ երեխաների, թե՛ նրանց ծնողների, նաև՝ հասարակության համար: Այս խնդրով անհրաժեշտ է զբաղվել այսօր, հոգուտ՝ ապագայի, հոգուտ՝ երեխայի: Եթե մենք այսօր ի վիճակի լինենք հասկանալու այդ

փոփոխությունների բնույթն ու միտումները, գուցեև կարողանանք կայացնել մեր երեխաների ապագայի հետ կապված լավագույն որոշումները ,և ըստ այդմ էլ նրանք կլինեն ապագայի ու գիտական առաջընթացի կա՛մ շահողները, կա՛մ զոհերը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Москаленко В.Д.«Зависимость:семейная болезнь»М.:ПЕРСЭ 2003
2. Юсуф Ибрахим Ахмед «Чатовая зависимость как психосоциальная проблема» 1994
3. Рогов Е.И.«Психология общения» М.Владос,2001
4. Борода К.В.2008« Интернет- зависимость у детей и подростков» Нью-Йорк
5. Մերողական ձեռնարկ «Դեռահասների առողջություն և զարգացում»Երևան 2014
6. Տամարա Դուրվսկայա «Երեխան հեռուստացույցի մոտ»
7. Վ. Մանտուլենկո«Մեդիակրթությունը ժամանակակից աշխարհում»
8. Антон Платов «Дети и родители.Сеть.Мир компьютеров» 2004
9. Бабаева Ю.Д., Войкунский А.Е., Смылова О. В,2000«Интернет, воздействие на личность»
10. Միրաքյան Վ. «Ազդեցիվ հեռուստատեսության հետևանքները»
- 11.Гордеев А.В.«Увлечение компьютерными играми.Психологический аспект» 2004
- 12.Парыгин В.Д.-Научно- технический прогресс и самореализация//Психология личности и образ жизни-2001
- 13.Ալբերտ Նալչադյան «Հոգեբանության հիմունքներ»
- 14.Мякинник Н.М.«Компьютер в жизни детей и подростков: польза или вред?»
- 15.Рубинштейн С.Л.« Основы общей психологии» 1946
- 16.Համացանց`

children.ombuds

academia.edu

jurnalist.am

hogeban.info

[YouTube](https://www.youtube.com/)